

ԵՌԱՄՍԵԱՅ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԵԼԻ ՊԱՏԱՀԱՐԱՅ

ՄԱՅԻՍ 26. — Գաղղիոյ նոր պաշտօնեայքն են. Պալլի, Էննու, Պէօլէ, Մաներ, Տօմբիէ, Պադ. պի, Տէսէյինի, Լապուլլու, և առ ժամանակեայ Սիսէյ. ներքին գործոց քարտուղարն է Բասգալ: — Իտալական երեսփոխանաց խորհրդարանը օրէնք կը հաստատէ որով կ'արգելու թափառական ա. րուեստից մէջ տղայք չգործածելու: — Ռուսաց կայսրուհին կը հասնի 'ի Հռովմ: — Դուքսն և գքսուհին Մոնթանիէ կը հասնին 'ի Վեննա:

27. — Իտալական երեսփոխանաց խորհրդա. րանն կ'օրինագրէ բառնալու կրօնաւորական կար. գերն Հռովմայ գաւառէն: — Հրգէհ 'ի Բերա Կոս. տանդնուպօլսոյ, ուր շատ մը տունք և կրպակք կ'այրին: — Moniteur գաղղիական լրագիրը շատ հաւանական կը համարի որ վաճառականութեան դաշնագրութիւններն՝ զորոնք Թիէն հաստատած էր, ետ պիտի թողուին առանց բանաքննութեան յԱզգային ժողովի:

28. — Ի Կարթագինէ Սպանիոյ՝ երկու պատե. րազմիկ եռայարկ նաւուց մէջ խռովութիւնք կը ծագին, այլ մէկէն կը ճնշուին: — Մալգա ար. քունի թափրոնն Վիլլէգի հրոյ ճարակ կ'ըլլայ: — Գառիքսի քաղաքատեսչութիւնը (Municipa. lité), թաղական դպրոցաց մէջ կ'արգելու կրօ. նական ուսումն: — Մատրիտ՝ դաշնաւոր հասա. րակապետականներն հրաւիրեալ են Դիէն մը կազմելու, որպէս զի կառավարութեան խնդրեն աւելի կորովութիւն, անտեսական վերանորոգու. թիւններ, և պաշտօնընկեցութիւն քաղաքապե. տութեան, որ սկզբնապատճառ եղաւ միապե. տութեան: — Պեւլինի խորհրդարանն ընդունե. ցաւ թղթատարական դաշնագրութիւնն Իտալիոյ հետ:

29. — Գաղղիոյ 150 ազգային երեսփոխանք կ'երթան յուխտ 'ի սրբավայր տիրամօրն 'ի Շառ. դըռ: — Շքեղ յուզարկաւորութիւնք կը կատա. րուին 'ի Միլան 'ի պատիւ Աղէքսանդրի Մանծո. նեայ: — Բարիզու քաղաքապետական խորհրդա. րանն իրեն նախագահ ընտրեց Վոդաէն: — Ի Քո. բէնհակ իբր գլուխ միջազգայնութեան (interna. tionale), դատապարտուեցան 'ի թի Բիա 6 տա. րի, Կէլէֆ 5 տարի, և Պալքս 4 տարի:

30. — Գաղղիացի զօրապետն Պառայլ՝ կարգե. ցաւ Պաշտօնեայ պատերազմի: Մագ-Մահոն հե. ռագրաւ կը ծանուցանէ առ զօրապետն Պադայլ՝ թէ կը կացուցանէ զինքն հրամանատար բանա. կին երկրորդ բաժնին: Ազգային ժողովն հաւանու. թիւն կու տայ վերականգնելու Վանսոմի կոթողն ինչպէս էր յառաջագոյն: — Ի Պոսդոն Ամբրիկոյ մեծ հրգէհ, որուն զինան է ոչ սակաւ միլիոն առ. լառ:

31. — Ի Պեւլին կը հասնի Պարսից Շահն, զոր կ'ընդունին կայսրն, արքայազուն իշխանք, Պիս. մարք, և անթիւ բաղմութիւն ժողովրդեան: — Ի Վեննա Դեսպանն Ռուսաց Նովիբով՝ հանգէս մը կու տայ, ուր ներկայ էին կայսրն Աւստրիոյ և ինքնակալն Ռուսիոյ: — Գաղղիոյ Journal officiel կը հրատարակէ անուանին կուսակալի մը (Pré-

fet), հինգ ընդհանրական գործակալաց (Procu. reurs généraux), շատ մը փոխանակի կուսակա. ւաց (Sous-préfet) և ընդ հանրական քարտու. ղարաց: — Norddeutsche Allgemeine Zeitung կը ստէ այն լուրը թէ Կայսրն Գերմանիոյ ինքնա. գիր նամակ մը ուղղած ըլլայ առ մարաջախան Մագ-Մահոն:

ՅՈՒՆԻՍ 1. — Արքայն Իտալիոյ զօրահանգէս կ'ընէ քաղաքական պահապանաց և զինուորաց 'ի Հռովմ՝ 'ի տարեգարծի Սահմանագրութեան: — Վիսգոնդի-Վենոսդա կ'ընդունի Ռուսաց ինքնա. կալէն մեծ շքանշանն Աղէքսանդր Նեւաքի ըսուած կարգին, 'ի շնորհակալութիւն ընդունելութեանն զոր դատաւ Կայսրուհին յիտալիա: — Պաշտօնա. պէս ծանուցուեցան 'ի Կոստանդնուպօլիս Դա. տական վերանորոգութիւնքն եղեալք յԵգիպ. տոս: — Ի Մատրիտ կը բացուի Սահմանագիր ժո. ղովը. նախագահն յետ խօսելու այլևայլ գործոց վրայ, կը յաւելու թէ Եւրոպա համոզուած է որ սպանիական հասարակապետութիւնն ամենեւին մասն չունի եւրոպական յեղափոխութեան հետ, և չիցանկար ընդարձակելու երկրին սահմանները:

2. — Իշխանն Ամէսէոյ կ'ընդունի 'ի Դուրին քաղաքացեաց այլևայլ նուիրակութիւններ, ո. րոնք կ'ընծայեն իրեն քաղաքական պսակ: — Ֆուռնիէ կը մնայ 'ի պաշտաման իբր Դեսպան Գաղղիոյ 'ի Հռովմ: — Կը մեռնի իշխանն Պիպէս. քոյնախկին Հապար Վալաբիոյ: — Մագ-Մահոն կ'ընդունի գիր խնդակցութեան 'ի Ս. Պապէն: — Տոն Գաւլոս ազատութիւն կը շնորհէ բոլոր գե. րեալ սպայից:

3. — Իտալական ծերակուտին նախագահն Դամբանական կը խօսի յԱղէքսանդր Մանծոնի: — Ի Վեննա վաճառատունն Brandais Weikers. kein անվճար կը թողու հատուցումներն: — Գեր. մանիոյ Կայսեր և Կայսրուհւոյն երթն 'ի Վեննա որոշուած է 'ի 21 յունիսի:

4. — Վեննա մեծ գողութիւն մը եղաւ 'ի ֆլաս Kreditanstatt գրամատեղւոյն իբր Ֆիորին 430,000: Գանձապահն Բոքոնի այս գողու. թեան գլուխն կը փախչի: — Անգղիոյ պանդան բարձրացուց զեղուսն 7 առ 0/0: — Հոլանտացի պատերազմական նաւն կրակ կ'ընէ ընդդէմ երեք բեռնաբարձ նաւուց որոնք անգղիական դրօշակ կը կրէին: — Գաղղիայէն հասան 'ի Գոլոնիա հինգ վակոն բարձուած հինգերորդ միլիարտին առաջին մասն:

5. — Կը մեռնի Ուրբանոս Ռագագցի իտալա. ցի քաղաքագէտը: — Գաւլիսգներն յաղթական կ'եղեն պատերազմէն զոր տուին մերձ 'ի Վերա քաղաք Սպանիոյ: — Նաբոլէոն իշխանն կը հասնի 'ի Բարիզ:

6. — Յանկարծական մահուամբ կը մեռնի Ա տալպերգ իշխանն Բրուսիոյ: — Ի պատճառս անգթութեանց Գաւլիսգներուն՝ մեծ զայրացումն կը տիրէ 'ի վերայ Ազգային ժողովոյն և բոլոր բը. նակչաց Սպանիոյ: — Ի Մատրիտ ազգային ժողո. վոյն մէջ Բէսէյրա կը բողբէ ընդդէմ լուծման յարատեւ ըսուած Յանձնաժողովոյն: — Կը մեռ. նի 'ի Բարիզ նախագահն Վիդէ:

7. — Կոման Առնիմ Դեսպան Գերմանիոյ՝ այսօր կը մատուցանէ առ Մագ-Մահոն իւր ընծայա. կան գրերն: — Սպանիացի Վալառտէ զօրապետին

բանակն ապստամբեցաւ աղաղակելով՝ Կեցցէ դաշնաւորական հասարակապետութիւն: — Իտալական ծերակոյտն կը յանձնարարէ նախագահութեանն ու եօթը ծերակուտից մասնաժողովոյ՝ հանգիստգիր ըլլալու Ռազդացցիի յուղարկաւորութեանցն: — Մատրիտի Ազգային ժողովը միաձայն կ'ընդունի 210 քուէիւք ընդդէմ երկուց՝ առաջարկութիւնն որ կը հրատարակէ կառավարութեան ձեռն առնականական գաշնաւոր հասարակապետութիւն: — Նոյն սպանիական Ազգային ժողովը կ'անուանէ զԲիի Մառկալ գահերէց Խորհրդարանին, իշխանութիւն տալով որ ինքն ընտրէ պաշտօնեայնները:

8. — Լիոնի քաղաքապետական ընտրութեանց մէջ՝ 36 ընտրելոց 35ը են արմատական և մէկն ազատ հասարակապետական: — Paris Journal կ'ապահովէ որ ծանր զգուշութիւնք որոշուեցան նկատմամբ օտար լրագրաց որ Փաղղիա կը մըտնեն: — Լատմիոյ զօրագլուխ քաղաքապետն Բարիզո՝ կ'արգիլէ Corsaire լրագրին հրատարակութիւնն ի պատճառս անզուսպ բանակաւորութեանցն և հակընկերական վարդապետութեանցն: — Բարեկարգութիւնը վերահաստատուեցաւ Փաղղիոյ բանակին մէջ, որուն հրամանատարութիւնը կը շարունակէ զօրագլուխն Վէլաուտէ:

9. — Լոնտոն ալքոհաւ պալատն Ալեքսանդրա, որուն արժէքը կը հաշուեն 600,000 լիւրս սգեռլին: — Տըպլին հրդեհի մը ժամանակ խաժամովն անկարգութիւններ կը գործէ, կ'աւարէ և քար կը նետէ զօրաց դէմ, որոնք բազմութեան վրայ կը յարձակին սուրիններով և 70 հոգի կը վիրաւորուին:

10. — Մահմուտ բաշային կուսակալ անուանիլն ի Քաստամուլնի՝ իբր արքայոր համարուեր է. և օգոստոսիա Սուլթանէն տաւնց ընդունելու ունկնդրութիւն՝ ճամբայ ելեր է պահապաններով զգուշացուած: — Բժիշկը խորհուրդ կուտան Քերմանիոյ Կայսեր կատարեալ հանգիստ առնուլ և ամենեկին գործի չգրադիլ:

11. — Յուդարկաւորութեան հանդէսն յԱղեքսանդրիա Բիեմոնդի ի պատիւ Ռազդացցիի չքեղ եղաւ և սրտաշարժ. բազմութիւնն էր իբր 40,000 հոգիք. Իտալիոյ այլ և այլ կողմերէն երեսփոխանութիւններ ներկայ էին, և շատ մ'ալ քաղաքատեսուչք կամ սինդիկոսք: Արարողութիւնը տեւեց հինգ ժամ: — Մատրիտ ի պատճառս Պաշտօնէից գրիւնն՝ անկարգութեանց վախկայ. զինեալ բազմութիւնք փողոցները կը պաշտօնին, զօրքը գրաւեր է քաղաքին ամրապահական տեղուանքը: Կռիւ չծագեցաւ Ազգային ժողովոյն հաւանութիւն տալովն նոր Պաշտօնէից: Ֆիկուէրաս հրաժարական կու տայ երեսփոխանութեանէ, և շտապաւ կը փախչի Մատրիտէն:

12. — Ռուսք ամբողջ մը կը կանգնեն Խիվայի սահմանադիտուն վրայ, և կ'անուանեն զայն Ս. Գէորգ: — Անդղիական պանդան զեղումն իջուց 6 առ 0/0: — Ի Պելձիգա ծերակուտին ժողովոյն մէջ Փաղիէ նորոգեց բողոքն ընդդէմ այժմեան կացութեանն Ս. Պապին, և պախարակեց Իտալիոյ վարմունքն առ Ս. Պապն և առ կրօնաւորական կարգս: Պաշտօնեայն Մալու կը ցաւի որ օտար կառավարութեան մը գործերն այսպէս կը պախարակուին հրապարակաւ: — Բարիզո զի

նուորական քաղաքապետը Ազգային ժողովէն իշխանութիւն կը խնդրէ գաղտնականի կանչելու զերեսփոխանն Ռանդ, որ մասնակցեր էր ապրտամբութեան և անդամ եղեր էր գօթի-ժողովոյն:

13. — Մարգիզն Միլիոուդի՝ Դեսպան Իտալիոյ յԱթէնս, պաշտօնէն հրաժարականը կու տայ: — Սէտան խստութիւնք ի գործ կը դրուին ի պատճառս յարձակմանց ընդդէմ գերմանական պահապան զօրաց: — Սպանիական զինուորքն ի Մուսվիէտոյ՝ կ'ապստամբին և գնդապետի տեղակալ մը կը սպաննեն: — Խըաիվը փոխառութիւն մը գաշնադրեց Օբբէնհայմ սեղանաւորին հետ, 32 միլիոն լիւրս սգեռլին անուանական: — Սպանիական բանակին այլևայլ զօրաբաժնից մէջ ապստամբութիւնք կը յաճախեն: — Կը մեռնի Իտալացի հռչակաւոր երգահանն Անձելլո Մառիանի:

14. — Փաղղիոյ Ազգային ժողովոյն մէջ Պառաննոն կը կարգայ տեղեկագիրն որով կ'ապացուցանէ թէ Ռանդ գաղտնաբարութիւն ընդունած չըլլալով՝ օրինաւորապէս ընտրելի է: Ազգային ժողովն ալ վաւերացուց այն ընտրութիւնը: — Ռուսաց Կայսրուհին կը մեկնի Հռովմայէն. յուղարկ կերթան ի կայսրան շոգեկառաց՝ Թագաւորը, Թագաժառանգն Հոմբերգ, Հռովմայ կուսակալը, արտաքին գործոց Պաշտօնեայն, և սինդիկոսը:

15. — Ի Մատրիտ մեծամասնութեան ակումբը կ'որոշէ որ սահմանադրական Յանձնաժողովը կազմուի տասուերկու անդամներէ, որոնք մեծամասնութեան և փոքրամասնութեան մէջէն ընտրուին, և տասուերեք ալ երեսփոխաններէ ապագայ վիճակ: — Ելուստական գրիւնն գէմն առնելու համար ի վեննա՝ մասնաժողով մը կազմուեցաւ առաջին կարգի դրամատէրներէ, յանձնելով յատուկ մասնաժողովերու որ չափ մը գնին ի ձեռն անսահման գումարի դրամոց Ազգային պանդայէն՝ ընդդէմ փոխանակագրաց պարտապան պանդայից:

16. — Ընդ Բրիտա և Բրադստէ Սլուզանէս ի Սպանիա՝ տեղի ունեցաւ սաստիկ պատերազմ: — Գործաւորք ի Պարցելոնա միջազգային ցուցահանդէսն կ'ընեն. դրսէն քիչ հոգի հանգիստտես էին: — Իտալական ծերակոյտը կը սկսի քննութեան առնուլ կրօնաւորական կարգաց վերնալուսն օրէնքը: — Մագեցաւ մաղձացաւն ի Զինչիննագի յԱմբրիկա:

17. — Ռուսաց Կայսրուհին շէնովայէն ուղեւորեցաւ Մոնսընի ճամբով: — Սպանիական կառավար զինուորքն իրենց ատելի վարմունքովն ի վիզ և ի Գալառ ոտք հանեցին զտեղացիս, որոնք երեքժանիններով անոնց վրայ յարձակեցան: — Գուպացիք յանկարծուստ վրայ կը հասնին 90 սպանիացուց, և անոնցմէ 40 հոգի կը սպաննեն: — Իտալական ծերակոյտն 68 քուէիւք ընդդէմ 20 քուէից՝ կը հաստատէ օրէնքն կրօնաւորական կարգաց վրայ:

18. — Պարսից Շահն ճաշկերութի կ'երթայ Կալէսի իշխանին յԱնգղիա: — Petit Lionnais ըստած արմատական լրագիրը կ'արգիլուի երկու ամսուան համար: — Ռանդ՝ Լոնտոն կ'ապաստանի որպէս զի նախազգուշութեան համար բանտ

չգրուի: — Ռուսաց զօրաջոկատն Մանկիշլաքի և Օրենպուրկի՝ առաւ յարձակմամբ զՂոտչէյլի, 'ի փախուստ դարձնելով զթշնամին: — Ռուսաց բանակն սաստիկ պատերազմէ մը ետեւ տիրեց Մանկուդ ամուր քաղքին, և անցաւ Ամուր-տարիա գետը: — Հանգիստաւոր բացումն երկաթ-ուղւոյ յԱդրիանուպօլիս:

19. — Մաղձացաւն 'ի Նիւ-Եօք շարունակէ բազմաթիւ մահունս գործելով, և բնակիչք կը փախչին Նաշվիլէն: — Ի Փաղղիա՝ վաճառակա-նութեան բարձրագոյն խորհրդոյն ամեն բաժինքը՝ միաձայն քուէարկութեամբ որոշեցին ետ քաշել հում նիւթոց վրայ գրուած օրէնքը, և վերա-դառնալ 1860 տարւոյն դաշնագրութեան: — Ազգային ժողովն հաւանեցաւ տալու իշխանու-թիւն, որպէս զի դատուի Ռանգ, 485 քուէիւք ընդդէմ 137 քուէից:

20. — Բարիզու քաղաքական ատենին գահե-րէցն՝ հրաման հանեց գրաւելու զշարժական ինչս (valeurs) Գուրպէ պատկերահանին, որպէս զի Վանտոմի կոթողին վերականգնման ծախքն հա-տուցուի: — Փառլիսդները կը յաղթուն 'ի Եռնգոզա թողլով 33 մեռեալք: — Տանիմարգայի Պաշտօնեայն հրաման հանեց քառաւորէն ընելու Տանձիկէն եկող նաւուց՝ ուր մաղձացաւն սկսեր էր ճարակիլ: — Սպանիոյ Գուռէպ մտադրու-թեան առին Պլան երեսփոխանին առաջարկու-թիւնն, որով կը խնդրէր որ իւրաքանչիւր երես-փոխան զինել տայ զինքն ընտրողներն ընդդէմ Փառլիսդներուն: — Իտալական Խորհրդարանին ներկայացուց Գորրէնգի՝ պարտաւորիչ ուսման առաջարկին տեղեկագիրը:

21. — Պեւլինու Ռայխսդակը կը հաւանի բա-րեկամութեան դաշնացի ընդ Գերմանիա և ընդ Պարսկաստան: — Միջիկանի անտառներն յԱմե-րիկա կը հրդեհին և Միջիկան քաղաքն 200 տուն կ'այրին այս հրդեհին պատճառաւ: — Մաղձա-ցաւը կը ճարակի 'ի Քէնգուքի յԱմերիկա: — Դուքսն Շառպու որ կը զինուորէր յԱլձերի, կ'անցնի Վերսայլի բանակին մէջ:

22. — Շոգենաւն Քուլմա կը նաւաբեկի մերձ 'ի Հոլիհէտ, տասուերկու նաւորդք և երեք նաւաստիք կը խղճուին ծովը: — Օգոստափառ Սուլքանը ծանր կը հիւանդանայ: — Ի Մատրիտ բոլոր պաշտօնեայք հրաժարականնին տուին յետ քուէարկութեանն, որով Գուռէպ յանձնեցին առ Բիի Մառկալ որպէս զի կարող ըլլայ գրիւ-թամանակ նոր Պաշտօնարան կազմել: — Մոնդէ-նեկրոյի իշխանը թողութիւն կը շնորհէ 'ի նպաստ փախստէիցի իր երկրէն:

23. — Սըրազպուրկի քաղաքատեսչական ընտ-րութեանց մէջ հակգերմանական նուիրակներ կ'ընտրուին: — Պազէն մարաշխտը դատող պա-տերազմի խորհրդոյն կազմութիւնը պիտի հրա-տարակէ Journal officiel: — Սուտ ելաւ այն լուրն որ կ'ըսուէր թէ մարաշխտն Սերրանոյ Սպանիա մտեր է միաւորական շարժումն առ-թելու համար:

24. — Մաղձացաւը կը նուազի 'ի Դըննըսի յԱմերիկա: — Զափաւորականաց կողմնակցու-թիւնը կը յաղթանակէ ընտրութեանց մէջ 'ի Վե-րինն Ալսաս: — Փաղղիոյ Ազգային ժողովոյն մէջ կը շարունակուի բանակաւորութիւնն Լըուալէ

երեսփոխանին հարցմանը վրայ՝ նկատմամբ քաղա-քական յուղարկաւորութեանց:

25. — Գերմանիոյ Կայսրուհին կը հասնի 'ի Վէննա: — Ի Պեւլին կը փակուի Ռայխսդակը: — Աթէնքի կառավարութիւնը կը շնորհէ Պաշ-դաճի սեղանաւորին երկաթուղւոյ շինութիւնն Պիրէոնէն 'ի Կորնթոս, 'ի Պատրաս, 'ի Միսսո-լունկի և 'ի Վանիցցա, ուր պիտի միանայ օսմա-նեան երկաթուղեաց հետ: — Իտալական Պաշ-տօնարանը խմբովին հրաժարական կու տայ: — Անգղիական կառավարութեան հրամանաւ կը բռնուին երկու նաւ Բլիմուդի նաւահանգստին մէջ, որոնք զէնք բարձուեր էին Փառլիսդներուն համար:

26. — Փառլիսդներուն խմբերն որոնց հրա-մանատար էր Տուէկարէյ՝ բոլորովին ցիր և ցան կ'ըլլան: — Սիվիլիա քաղաքը պառիզադ կը կան-գնեն: — Պետական խորհուրդն 'ի Ռիոյ Եանէյ-ուոյ որոշեց որ քահանայապետական կոնգակներն յառաջ քան գործադրուին 'ի Պրէզիլ, պէտք է կառավարութենէն ընդունին Placet, և թէ բա-նագրանքն ամենեւին քաղաքական արգասիք չու-նենան: — Իտալական ծերակոյտն երեք հոգւով Յանձնաժողով մը կը կազմէ հսկելու կրօնաւորա-կան կարգաց բարձման օրինաց գործադրու-թեանը վրայ: — Յորենին հունձքն յԱմերիկա այս տարի եղեր է 250 միլիոն քոռ:

27. — Փաղղիոյ Ազգային ժողովը կ'ոչնչացու-նէ զընտրութիւնն Դուրինի 'արմատական երես-փոխանին Նիւվաի 'ի պատճառս ընտրողական խարդախութեանց: — Լիվըրուլի լրագիրքն իմաց կու տան թէ Ափրիկէի ծովեզերքը գեղնատենդը ճարակեր է, և քանի մը նաւուց մէջ շատ մար-դիկ մեռեր են:

28. — Պեւլին մաղձախտ ընկեր է: — Սան-դա-Գրուս բանտարկեց զՓաղղիացի քաղաքա-տեսուչն Վիրիազու և զթղթակիցն Le Pays լրա-գրին: — Մատրիտի Պաշտօնարանին կազմու-թիւնն է, Ներսիս Գործոյ՝ Մառկալ, Արքաթիս Գոր-ծոյ՝ Մէզոնավ, Պաթերապի՝ Կոնծալէս, Արքաթ-Լէան՝ Պէռժէս, Ելմաթի՝ Գառպայալ, Հաս-բալայ շինաւորոյ՝ Գոսդալէ, Գալախանալէանի՝ Սունէր:

29. — Փաղղիոյ Ազգային ժողովոյն 50 երես-փոխանք ուխտի կ'երթան 'ի Բարէյ լը Մոնիալ: — Կազի պայթումէն 'ի հիմանց կ'այրի Հրէից ժողովանոցն 'ի Պորտոյ, և շատ մ'ալ տուն կրակին կերակուր կ'ըլլան: — Վենետիկոյ գաւա-ռին մէջ՝ Գոնելիանոյի մօտ Ս. Պետրոս տի Ծա-լէզդէ ըսուած գեղն երկրաշարժէ եկեղեցւոյն եր-դիքն ընկնելով սուրբ պատարագի ժամանակ, 50 հոգի սպաննուեր ու թաղուեր են տակը: — Գերմանական կայսրութեան ծախուց ելքն յա-մին 1872 հասեր է 440 միլիոն ֆլաւնգ:

30. — Գերմանիոյ տիրած գաղղիական երկիր-ներուն մէջ՝ 'ի Շիգրիկայմ, 'ի Գուլմար, և 'ի Միւլհաւզէն՝ լրացուցիչ ընտրութիւններէն չա-փաւորականաց կողմնակցութեան նուիրակներն յաղթական ելան: — Պեւլինու դաշնակցական խորհուրդը կ'ընդունի դրամական օրէնքն ինչպէս որ քուէարկեց Ռայխսդակը: — Իրաւախոհու-թիւնն ընդ Հունգարիա և ընդ Խրուաթս՝ կատա-րուեցաւ:

ՅՈՒՆԻՍ 1. — Փաղղիական լրագիրն Grandvil-lais դատապարտուեցաւ յանձն խմբագրողին և գործակատարին՝ 4,000 ֆրանկ տուգանաց և 14 ամիս բանտարկելութեան: — Կալանաւորեցաւ անկեալ նախագահն հելուետական Դաշնակցու-թեան՝ Ֆոռնըռտ: — Եգիպտական փոխառու-թիւնն ետ ձգուեցաւ մինչև ցհոկտեմբեր: — Փաղղիացի երեսփոխանն Պէսոն, որ մէկն էր ուխ-տաւորաց ի Բարէյ լը Մոնիալ, իբր ներկայացու-ցիչ Ազգային ժողովոյն, ճառ մը խօսեցաւ՝ այս-պէս կնքելով խօսքը. « Պատեհ ժամանակին ճամ-բայ պիտի ելլենք վերստին հաստատելու Սրբա-զան Հայրը Սուրբ Պետրոսի գահուն վրայ »:

2. — Ռէտէնգորիսդ ըսուած կրօնաւորաց վանքն ի Պորքուժ՝ Բրուսիոյ կառավարութիւնը փակել կու տայ, և կրօնաւորաց ալ կ'արգելու-ն և իցէ եկեղեցական պաշտամունք: — Փերմա-նական լրագիրն Գառաւախն Բըլախիւն ըսուած՝ կը հաւաստէ թէ Ալսասի և Լորենի մէջ եղած ընտրութեանց նպաստաւոր ելքը՝ պարտութիւն մ'է գաղղիական կողմնակցութեան: — Ի Սի-վիլիա պատիգարներ կը կանգնուին թնդանթնե-րով զինուած:

3. — Ճինէվրայի ատեանը վճռեց հատուցանել առ Միացեալ-Նահանգս Ամերիկոյ գումար մը 15 միլիոն և 500,000 տոլառ ոսկի, փոխարէն Ալապ-իս նաւուն տուած մնասուցն: — Միացեալ-Նա-հանգաց կառավարութիւնն անուանեց զգնդա-պետն Գէորգ Ուիլիէմսոն լիազօր պաշտօնեայ կենդրոնական Ամերիկոյ բոլոր հասարակապետու-թեանց քով: — Կը մեռնի ի Լոնտրա իշխանն Յովսէփ Բոնիագովսի:

4. — Deutsche Nachrichten կ'ըսէ որ նի-զակակցութեան գաշնագրութիւնն ընդ Իտալիա և ընդ Փերմանիա լրացած իրողութիւն մ'է: — Պազէն մարաջախտին գատաստանը պիտի բա-ցուի ի Փոմբէէներ սեպտեմբերի վերջը: — Կը մեռնի ժանտառնդէ (typhus) ի Տարմշտագ ե-րևելի հնագէտն (paléontologue) Քաւփ: — Փոլոնիոյ արքեպիսկոպոսն գատաստանի ձգուե-ցաւ երկու ժողովրդապետաց դէմ մեծագոյն բա-նագրանք տալուն համար:

5. — Պարսից Շահն կը մանէ Շէրպուրի նա-ւահանգիստն՝ ընկերակցութեամբ Փաղղիոյ նա-ւատորմին: Քաղաքը փառաւորապէս լուսաւո-րուեցաւ: — Խիվայի Խանն անպայման անձնա-տուր եղաւ առ զօրապետն Ռուսաց Քաւփման: — Միջերկրականին մէջ եղած սպանիական նա-ւատորմիլը վերցուեցաւ խնայողութեան համար: — Ռուս կը փոխէ միտքն անկեալ Կայսրուհւոյն Փաղղիոյ՝ չերթալ ի տես համաշխարհական ա-րուեստահանգիսին ի Վեննա: — Կղերականք ի Փաղղիա կը յորդորեն զգիւղացիս յօրինաւորա-կան միապետութիւն:

6. — Ի Պոսնիական Կրատիսկայ՝ Եւրոպիոյ Տաճկաստանի մէջ՝ ծանր անկարգութիւնք կը հանդիպին ընդ մահմետականս և ընդ քրիստո-նէոյս, և Քայմաքամը անկարեկիր կը մնայ: — Պարսից Շահն կը հասնի Բարիզ, փառաւոր կ'եր-պով կ'ընդունուի տէրութեան ներկայացուցիչ-ներէն, և կ'իջնէ Պուրպոնեան պալատը: — Վե-նետիկոյ գաւառին մէջ ի Պելլուն կը շարունակեն սաստիկ երկրաշարժութիւններ: — Ի Պեռնա

քաղաք Ջուիցերիոյ թղթատարութեան ընդհա-նուր գաշնագրութեան մը հիմունք կը ձգուին ընդ Եւրոպա և ընդ հիւսիսային Ամերիկա:

7. — Վերսայլի Ազգային ժողովոյն մէջ բա-նաքննութեան կ'ելլէ ծրագիրն վերանորոգու-թեան գաղղիական բանակին: — Լիւքսանպուրի իշխանութեան սահմանազխոյն վրայ մենամար-տութեան կ'ելլեն Ռանդ և լրագրապետն Գասա-նեագ: Երկուքն ալ կը վերաւորուին: — Ջուիցե-րիոյ Իլլինոյ նահանգին կառավարութիւնն ար-գիլեց Պիլան ըսուած ընկերութեան ժողովներն ու կրօնական կրթութիւնքն աշխատութեան օ-րերն: — Բարիզ մեծամեծ հանգէսներ կը կատա-րուին ի պատիւ Շահին Պարսից:

8. — Վենետիկոյ գաւառին մէջ երկրաշարժն ի հիմանց կործանեց 15 գիւղօրէք և նոյնչափ մ'ալ չարաչար մնասեց: — Եղած կորուստը շատ միլիոններու կը հասնէ. հազարաւոր ընտանիք յետին թշուառութեան մէջ ընկեր են: — Սպա-նիայէն բազմաթիւ ընտանիք սկսան տնով տեղով գաղթիլ յօտարութիւն:

9. — Առաքաստագործաց ընկերութիւնն ի Պարցելունա՝ ընդհանուր ժողովով որոշեց որ բաժ-նուին գործաւորաց միջազգային ընկերակցութե-նէն: — Իտալական պաշտօնարանը կազմուեցաւ հետեւեալ կերպով. Գահերէց Խորհրդոյն և Պաշտօնեայ Եւրոպիոյ՝ Միակէզգի. Արաբիոյ գործոյ՝ Վիսգոնգի-Վենոսգա. Ներսիս գործոյ՝ Գանգէլի. Արաբու-թեան և Շուրհայ՝ Վիլլեանի. Պարբերալի՝ Ռիգոդ-գի. Մուլիալ՝ Սէն-Պոն. Հասարակաց Ինտընթեան՝ Շա-լոյեա. Հասարակաց Էնտընթոյ՝ Սրավէնդա. Երկու-գործութեան և Վաճառականութեան՝ Ֆինալի:

10. — Գաւառացիները աւրըշտեցին երկաթ-ուղին ընդ Մուրսիա և ընդ Կարթագինէ: — Փաղղիոյ հողէն Փերմանացւոյ պարպուիլը պիտի սկսի 31 յուլիս, և պիտի տևէ մինչև 15 օգոստոս: — Եգիպտական փոխառութիւնն երեք անգամ գոցուեցաւ: — Սպանիացի հասարակապետա-կաններն աւարեցին Սանթուրոս քաղաքը, լլկե-լով զկնիկ մարդիկն ու այրելով գործարան մը, պատճառ բերելով թէ բնակիչները Գաւառի գն: — Պուլոններ անտառն ի Բարիզ մեծ զօրահան-դէս մը կատարուեցաւ 80,000 հոգւով ի պատիւ Շահին:

11. — Մագ-Մահոն մարաջախտին կը պար-գէէ Շահը իւր կարգին մեծ ժապաւէնն հանդերձ ագամանդակու և կենդանագրով: — Ռիբոլ ը-սուած տեղն ի Սպանիա կռիւ մը հանդիպի ընդ-դունդն Սապուլաս և ընդ Փապրինէդգի. այս վեր-ջինս կը սպաննուի: — Արմատական լրագիրն Lx France Republicaine արգիլուեցաւ: — Սպա-նիացի միջազգայինք տիրեցին Ալգոյ քաղաքին, և Ալգատն հրացանով սպաննեցին:

12. — Նէապոլի գաւառին Սիրի ըսուած հով-տին մէջ՝ սաստիկ երկրաշարժ մը եղաւ: Շատ տներ մնասուեցան: — Իուքսն Էտիմպուրկի ար-քայորգին Անգղիոյ՝ նշանուեցաւ Մարիամ մեծ-դքսուհւոյն՝ Ռուսաց կայսեր դստերն հետ: — Վերսայլի Ազգային ժողովոյն մէջ Շուաղէօլ կը մեղադրէ զնախագահն Պիւֆֆէ, որ բանակը կարգաւորելուն պատիւն այժմեան կառավա-րութեան կու տար: Պառանեոն կը հերքէ Շուա-ղէօլի խօսքը: Ժողովոյն նիստը կախ կը թողուի:

13. — Խիվայի Խանը ինքզինքն հարկատու կը հրատարակէ Ռուսաց ինքնակալին: Քաւֆ-ման զօրապետը վերստին կը հաստատէ զինքն իր իշխանութեանը մէջ. ինքն ալ երախտագիտութեան համար գերեզմանաւթիւնը կը վերցունէ: — Մալակա քաղաքին բնակիչքն ոտք ելան, բազմաթիւ քաղաքատեսչական խորհրդականներ ըսպաննուեցան: — Սպանիական կառավարութիւնը վստահութեան քուէարկութիւն կ'ընդունի Ազգային ժողովէն, որուն յայտարարութիւն կ'ընէ թէ անողորբելի պիտի ըլլայ որ և իցէ խռովութիւն հանդիսանալէն դէմ:

14. — Գոնդալէսս հրամանատարութիւնը կ'առնու Կարթագինէի ապստամբաց (միջազգայնոց), որոնք բոլոր քաղաքին տիրեր են: Վախ կայ որ նաւարանին ու նաւուց ալ տիրեն: — Պատե-րազմի Պաշտօնեայն Կոնծալէս՝ ճամբայ կ'ելլէ դէպ 'ի Կարթագինէ, բայց չկրնար անցնիլ Բալ-մայի շոգեկառաց կայարանէն:

15. — Վէլառաէ կը մտնէ Ալգոյ քաղաքը: Քաղաքացի զօրքը զինաթափ կ'ըլլայ: — Գաւ-լիսգները կը տիրեն Պերկա քաղաքին, զոր 500 հոգի կը պաշտպանէին, որոնք ամենքն ալ գերի ընկան: — Բաւական զօրք ղրկուեցաւ 'ի Կարթա-գինէ՝ ապստամբութիւնը ճնշելու համար: — Պաշտօնեայքն արտաքին գործոց, շնորհաց և ար-գարութեան ու ելումուխի՝ հրաժարականնին տուին, որպէս զի գիւրացընեն համամիտ պաշտօ-նարանի մը կազմութիւնը: — Պարոն Ռոշիլդ-քանի մը դիտողութիւնք կը ներկայացունէ առ Շահն՝ նկատմամբ Հրէից թշուառ վիճակին 'ի Պարսկաստան:

16. — Վիզպատենի կառավարութիւնը կ'ար-գելու ուխտապնացութիւնն 'ի վանս Պոռնոֆէ-նի: Վանքին միաբանութիւնը կը ցրուի: — Գոն-դալէսս հարկ կը ձգէ Կարթագինէի վրայ 400,000 ֆռանգ: — Մուրսիայի ապստամբները կ'աւերը-տրկեն երկաթուղոյն գետնափոր ճամբան: — Սանդա-Գրուս քահանայն Գաղղիա կը մտնէ: — Վերսայլի ժողովոյն մէջ կը շարունակուի վիճա-բանութիւնն բանակին վերստին բարեկարգու-թեան ծրագրին վրայ:

17. — Անգղիական պանդան կ'իջեցունէ զեղ-չումն 2 1/2 առ 0/0: — Սերվեր բաշային 'ի Բարիզ՝ կը փոխանակէ գեսպանութեամբ Ալի Բաշան՝ Ստամպուլի քաղաքատեսուչը: — Հունգարիա մղձաճաւը ահաւոր կոտորած կ'ընէ: — Պարսից Շահը նամակ կը գրէ առ Թագաւորն Իտալիոյ՝ ծանուցանելով որ տէրութեան կարևոր պատ-ճառներն չեն ներեր երկարելու ճանապարհորդու-թիւնն յիտալիա: — Տոն Գաւրոս կ'երթայ Պիլ-պաոյ քաղաքին վրայ 10,000 զօրք:

18. — Ի Տրոնդհայմ կը պսակուին Շուեետաց Թագաւորն ու Թագուհին: — Սպանիոյ Ազգային ժողովը կ'ընդունի Բիի Մառկալի հրաժարակա-նը: — Թղթատարական դաշնագրութիւնն ընդ Իտալիա և ընդ Գերմանիա վաւերացաւ երկու կողմանէ: — Սպանիական գործակատարն կը խնդրէ Գաղղիոյ կառավարութենէն՝ որ յանձնէ Սանդա-Գրուսն իր տէրութեանը, և ժխտումն կ'ընդունի:

19. — Պարսից Շահը ճամբայ կ'ելլէ Բարի-զէն: — Սանդա-Գրուս նորէն կը հագուի եկե-

ղեցական տարազը, ու կ'ուղևորի դէպ 'ի Հռովմ: — Սպանիական պաշտօնարանը կազմուեցաւ հե-տևեալ կերպով. Գահէլէյ՝ Սալմէրոն առանց պաշ-տաման, Արքային գործոց՝ Ֆէռնանդ Կոնծալէս, Ել-մաից՝ Գաւալայալ, Արքայադէմն՝ Ժիլ Պէլկաս, Ներքին գործոց՝ Մեղոնալ, Պապերազմի՝ Կոնծալէս, Մալիալ՝ Օվէյրոյ, Հասարակաց շինարարոց՝ Մոռենոյ, Գաղթականութեան՝ Բալանգոյ:

20. — Արիւնահէղ պատերազմէ մը ետև Գաւլիսգները տիրեցին Իկուալատա քաղաքին: — Պետրոս Պոնաբառէ կը խնդրէ Շահէն հրաման մտնելու պարսկական բանակը: — Զուիցերիոյ նահանգաց Յանձնաժողովը կը կազմուի 'ի Պեռ-նա՝ վերաբնակելու դաշնակցական սահմանագրու-թիւնը:

21. — Սամուէլ Բաշա անունով անգղիացի միջազգայինը հրամանատար կ'ըլլայ ապստամբ եռայարկ նաւու մը 'ի Կարթագինէ: — Վերսայլի Ազգային ժողովը 130 նպաստաւոր քուէիւք կը հաւանի աջակողմեանց օրակարգին, որով կ'ըսեն թէ՝ «Ազգային ժողովը վստահութիւն ունի կա-ռավարութեան քաղաքականութեանը վրայ»: — Համբաւեցաւ թէ դաւադրութիւն մը եղեր է Սերրանոյ մարաջախտին կենացը դէմ իր դը-կին պարտիզացը մէջ:

22. — Ընդ Տանիմարգա, Շուեետ և Նորուե-կիա՝ Թղթատարական դաշինք մը հաստատուեցաւ, որով նամակաց գիրը միակերպեցաւ բոլոր այս ե-րեք տէրութեանց մէջ: — Բազմաթիւ թնդա-նօթք, անհամար զէնք և զինուոց պաշարք Անգ-ղիայէն հասան 'ի Լէքոէյոյ՝ Գաւլիսգներուն համար: Ասոնց զօրութիւնն ընդ բովանդակ հիւ-սիսակողմն Սպանիոյ կ'ելլէ 30,000 հոգիք:

23. — Բրուսիացիք կը քաշուին Մէզիէրէն ու Թիոնվիլէն: — Վերսայլի Ազգային ժողովը կը հաւանի Էռնուլի ծրագրին, որով յարառե-ծանձնաժողովին իրաւունք կը տրուի դատի կան-չել՝ եթէ ժողովական պարապոյ ժամանակ նա-խատինքն մ'ըլլայ ընդդէմ Ազգային ժողովոյն: — Ռուսաց ինքնակալը ճամբայ կ'ելլէ դէպ 'ի Վարշաւ, այն տեղ գտնուած զօրացն հանդէսը-նելու: — Մառկինէզ անուանուեցաւ ընդհա-նուր հրամանատար 'ի Վալէնցա փոխանակ Վա-լառաի:

24. — Անգղիական պանդան կ'իջեցունէ՝ զեղ-չումը 4 առ 0/0: — Ֆուէզա գնդապետը 240 թիկ-նապահ հեծելօք (gendarmes) Գաւլիսգներուն հետ կը միաբանի, անկարելի համարելով որ ա-սոնցմէ զատ ուրիշները կարող ըլլան խաղաղու-թիւն հաստատելու: — Իտալիոյ Թագաւորին կողմանէ պատգամաւորք կը ղրկուին 'ի Մոտան՝ ընդունելու Պարսից Շահը:

25. — Իտալիոյ Թագաւորը փառաւորու-թեամբ կ'ընդունի Պարսից Շահն 'ի Դուրին: — Ս. Պապը կարգինալաց ժողով կը կոչէ անուանե-լու եպիսկոպոսունս 22 եկեղեցեաց: — Ներքին գործոց Պաշտօնեայն 'ի Մատրիա՝ ի զէն կը կոչէ 80,000 հոգիք պահեստի զօրաց: — Իտալիոյ Թա-գաւորը կը շնորհէ մեծ եպարգոսին Աւետման կարգը:

26. — Պալգիմուր մեծ հրդէհ մը եղաւ Գալէ Սգուիդ ըսուած փայտի շտեմարանները. 100 տուն այրեցան: — Մէզիէն անկարգութիւնք կը

ծագին, որ կը ճշուելն զննուորաց քանի մը յար-
ձակմամբ ամբարն ցրուելով: — Բրուսիացի եր-
կայարկ պատերազմական նաւէ մը բռնուած
սպանիացի գերիներն ազատ կը թողուին:

27. — Պարսից Շահը կ'ընծայէ Իսապիլոյ Թա-
գաւորին և Թագաժառանգին իր կենդանագիրն
սկանակուռ զարդարուած: — Քամենլա քա-
ղաքն 'ի հռենոսեան Պաւերա գրեթէ բոլորովն
այրեցաւ: — Շահը Իսրայիլէն ճամբայ կ'ելլէ,
անցնելով Միլանէն դէպ 'ի Վեննա:

28. — Իսրայիլ մեծ հրգէհ մը կ'իսով չափ կ'այ-
րէ նաւարանը, պատճառելով միլիոնաւոր կո-
րուստ: — Վերսայի Ազգային Ժողովոյն մէջ բա-
նաքննութեան կ'առնուի դրօշակի վրայ եղած
վերահարկին վերցուելուն ծրագիրը: — Բավիա
զօրապետը բոլորովն կը պաշարէ Սիվիլիա քա-
ղաքը:

29. — Բրուսիոյ կառավարութիւնը կը խոս-
տանայ Սպանիոյ Պաշտօնէին 'ի Պեւելին ետ տա-
լու զնաւն Վիճիլադէ: — Ապստամբաց հինգ թըն-
դանօթաձիգ նաւ (canonnière) Կարթագինէն
ճամբայ կ'ելլեն և զօրք կը թափեն յԱլմերիա: —
Կարթագինէի ապստամբք կառավարութիւն մը
կը կազմեն անուանելով Գոնգրէրասը նախագահ
և ծովակալ:

30. — Սիվիլիոյ ապստամբութիւնը բոլորովն
ճշուեցաւ: — Մեծապէս զայրացեր են բնա-
կիւքն ապստամբաց դէմ, որոնք կրակ կու տան
որ տեղուանքէն որ կը հեռանան: — Գաւիսդ-
ները կը կոտորուին 'ի Մառէաֆէտէս: — Ազատ
կը թողուին 700 հասարակապետական գերիք: —
Պարսից Շահը կը հասնի 'ի Վեննա:

31. — Ի Պէյար Ժողովուրդը սպանիական կա-
ռավարութեան նպաստաւոր ցուցակութիւն կ'ը-
նէ: — Զօրաց մուտքն 'ի Սիվիլիա մեծ ուրախու-
թիւն պատճառեց, որոնք 70 թնդանօթ ձեռք
ձգեցին: — Երկայարկ պատերազմական նաւքն
Ալմուսոր և Վիլիսիա ճամբայ կ'ելլեն դէպ 'ի
Մոսթրիլ պատերազմական հարկ պահանջելու:

ՕԳՈՍՏՈՍ 1. — Կը մերժուին Հռովմ մանելու
70 ուխտաւորք որ Լորեդոյէն կու գային: — Բրու-
սիացիք կը քաշուին Նանսիէն: — Անգղիացի և
Գաղղիացի պատերազմական քանի մը շոգենաւք
Պիլպայի գետէն վեր կ'ելլեն: — Գերմանական
չորս պատերազմիկ նաւեր Մալակայի առջև
կ'երթան: — Կաանագա անձնատուր կ'ըլլայ:

2. — Համաշխարհական արուեստահանգիսին
մէջ 'ի Վեննա, ալոսասկան գիւղիկը բոլորովն
կ'այրի: — Քաղաքատեսչական ընտրութեանց
մէջ 'ի Նաբոլի՝ ազատական կողմնակցութիւնը
յաղթող կ'ելլէ: — Ֆուլտայի կառավարութիւնը
կը գաղթի տալու եկեղեցական կղերանոցին դրա-
մական օգնութիւնը: — Գաւիսդներու դաւա-
ճանութիւն մը կը յայտնուի յԱլմանա: Այլ և
այլ անձինք կը բանտարկուին:

3. — Իտալական նաւատորմին որ Մալգա կը
գտնուի, հրաման ընդունեցաւ անմիջապէս ճամ-
բայ ելլելու դէպ 'ի Սպանիա: — Անգղիոյ, Ռու-
սիոյ և Գերմանիոյ հիւպատոսներն ուրախակից
կ'ըլլան Բավիա զօրավարին իր զօրացն ընթացիցն
և առ օտարս շնորհած պաշտպանութեանն համար:

4. — Անգղիական կառավարութիւնը կը յայտ-
արարէ իր նաւային իշխանութեանց որ գերի

չյանձնեն երբ ապստամբ սպանիացի նաւերէն
բռնեն: — Գաւիսի թնդանօթաձիգները կը
բանտարկեն քաղաքատեսչական խռովարար Ժո-
ղովը, և կը յանձնեն զօրաց որ քաղաք կը մըտ-
նեն: — Կաանագա հպատակեցաւ: — Բովան-
գակ Անտալուսիա բոլորովն խաղաղացան:

5. — Մագ-Մահոն կ'ուզուորի դէպ 'ի Գալէ
թնդանօթաձիգութեան փորձերուն ներկայ գըտ-
նուելու համար: Երեք օր կը մնայ այն տեղ: —
Սպանիական կառավարութիւնն Հռովմունեցած
շարժական ինչքը կը վաճառէ 20 միլիոն ֆրան-
քաց: — Գերմանիոյ Թագաժառանգ իշխանը կը
հասնի 'ի Գրիսաիանիա: — Լուր կ'ելլէ 'ի Պեւ-
կրատ թէ անանկացեր է վաճառատունն Ան-
տրիէվիչ:

6. — Ընդ կոմսն Շամպորի և ընդ կոմսն Բա-
րիզու առանձնախօսութիւն մը տեղի կ'ունենայ,
որ կը տեւէ երեք ժամ: — Քոբէնհագի վերագոյն
առանը դատապարտեց ընկերավարներն Պրիքս
և Կէլէֆ բռնականաշխատանաց (travaux forcés),
առաջինն 5 տարի և երկրորդն 3 տարի, սահմա-
նադրութեան դէմ գրգռմանց համար: — Հէրլէ
և Ապու կը մենամարտին: առաջինն է Journal
de Paris լրագրին խմբագրողն, երկրորդն է XIX
siècle լրագրին խմբագրողն: Ապուի թեւը կը վի-
րաւորուի:

7. — Կը մեռնի Բարիզ Օտիյոն Պաուլ Նշանա-
ւոր քաղաքագէտը: — Վեննա փառաւոր զօրա-
հանդէս մը կը կատարուի 'ի պատիւ Շահին: —
Գերմանիոյ լրագիրը կ'ըսէ թէ գերմանական նաւա-
տորմին նոր հրամանատարը ճամբայ ելաւ դէպ
'ի Ճիպրալդար: — Մէգա և Դէյքսիտորանուով
ճոխ երկրատեսարք ձերոնա գտաւորն՝ հրացանաւ
սպաննուեցան հրամանաւ Սապալա Գաւիսդ զօ-
րադիւնոյն, թէպէտ անոնք Գաւիսդներուն կողմ
նակցութենէ էին:

8. — Ռոշֆոր նաւ կը դրուի դէպ 'ի Նոր Գա-
լէտոնիա տքսոր զրկուելու: — Անգղիոյ Խորհրդ-
դարանին այլևայլ պաշտօնեայք հրաժարական
նին կու տան 'ի պատճառս տարբերութեան կար-
ծեաց անոնց ու ելուամից Պաշտօնէին մէջ: —
Կոմսն Շամպորի կ'ընդունի Թագաւորական պա-
տիւն որ իրեն կ'ընծայէ օրինաւորականաց նուի-
րակութիւնը: — Շահը ճամբայ կ'ելլէ դէպ 'ի
Պրինտիզի:

9. — Մոնդէնկերոյի իշխանը ծանր վիրաւո-
րուեցաւ երեսը՝ հրացանի հարուածէ մը: վիրա-
ւորողն անծանօթ մնաց: — Գոուգէպը կը հաւա-
նին վերցունելու շնորհաց իրաւունքը: — Շոգե-
նաւն Եալադէր նաւորդնելով լի, բոլորովն այ-
րեցաւ Բոգոմագ գետին վրայ: — Սպանիացի
զօրքը Վալենցա կը մանեն:

10. — Գոուգէպը հրաման կու տան դատելու
այն ինն երեսփոխանքն որ ապստամբեցան 'ի Կար-
թագինէ: — Շահը կ'անցնի Վերոնայէն և կ'եր-
թայ Պրինտիզի: — Կաանագան անձնատուր կ'ըլ-
լայ: — Գոնդառաս ճամբայ կ'ելլէ Մուրսիայէն՝
հետն առած 2000 հոգի և երկու թնդանօթ եր-
թալու ընդդէմ Մատրիաի:

11. — Բասգալ անուանուեցաւ կուսակալ
Ժիրոնտ նահանգին 'ի Գաղղիա: — Կը մեռնի 'ի
Բարիզ դուքսն Մարմիէ: — Գաւիսդներու գըն-
դեր Լաուդգոյի մօտ Դերրակոնայի մէջ կը յաղ-

թուին: — Գերմանական կառավարութիւնն հրաման կը հանէ որ շուտով պատրաստ գտնուին նորաշէն արտաքին բերգերն սրոնք պիտի պաշտպանեն Սորազպուրկ քաղաքը գնդակոծութենէ պատերազմի ժամանակ:

12. — Երկաթուղւոյ գծադղութիւն մը կը հանդիպի Օրդէ քաղաքին մօտ՝ Հռովմայէն 78 քիլոմէթր հեռու, և 2 հոգի կը մեռնին ու 40 հոգի կը վիրաւորուին: — Պիլպաոյ քաղաքը կը պաշարուի Գաւլիսդներէն, որոնք կ'աւրեն ջրոյ ճամբաները: — Դատաստանի կը կանչուի Բեռնամպուլդոյի եպիսկոպոսն որ կառավարութեան հրամանացը չէ ուզած հնազանդիլ:

13. — Պարսից Շահը կը հասնի Պրինսիփի: — Սպանիական կառավարութիւնը զօրք կը ղրկէ Կարթագինէի դէմ: — Անգղիացի նաւ մը ցամաք կը հանէ 'ի Ֆոնդանարապիա 2,000 հրացան, 40 ձի, և 50 կենդանար վառօդ Գաւլիսդներուն համար: — Կապանդիսապուլի յունարէն լրագիրը կ'արգելուի Ռուսիոյ կառավարութեան դէմ նախատական զրպարտութիւններ հրատարակելուն համար:

14. — Արդարութեան Պաշտօնեայն 'ի Քոբէնհակ վճիռ կը հանէ արգիլելով միջազգային ընկերակցութիւնն գործաւորաց Տանիմարգայի: — Թիէր կ'ուղևորի դէպ 'ի Զուիցերի: — Սպանիական Գողգէսները կը հաւանին առաջարկութեանն որով 80,000 հոգի պահեստի զօրք 'ի զէն կը կանչուին:

15. — Գաւլիսդները կը ստիպեն Պիլպաոյ քաղաքն որ երկու օրուան մէջ անձնատուր ըլլայ: — Քէօնիկզպէրկ քաղաքը մաղձացաւը կը ծարակի: — Նորազանդից ժողովն, որ ամսուս 14ին բացուեր էր Լիպսիոյ համալսարանին մէջ, հարկաւոր ճանչցաւ մտցունել քաղաքական ամուսնութիւնը: — Բողէն՝ տաեանը կը սկսի արքեպիսկոպոսին դէմ եղած դատին քննութիւնը:

16. — Նաբոլէոն իշխանն Այաչիոյ կը հասնի ներկայ գտնուելու ընդհանուր ժողովոյն նիստերուն:

17. — Կարթագինէի ապստամբք թիոյ ծառայութեան դատապարտեալները արձկեցին և անոնցմէ 1,500 զինեցին: — Իտալիոյ հասարակաց շինուածոց Պաշտօնեայն հրաման հանեց որ Օրդէի գծադղութեան ճշմարիտ պատճառները քննուին: — Գաւլիսդներն որ բանակեր էին Պայայի երկու ափանցը վրայ Պիլպաոյի մօտ՝ կրակ ըրին ընդդէմ բազմաթիւ սպանիացի, անգղիացի և գաղղիացի նաւուց:

18. — Միջազգային ընկերութիւնն յայտարարութիւն հանեց և Սպանիոյ ապստամբած քաղաքներուն պատերը փակցունել տուաւ, որուն մէջ Ալգոյի հրդեհներու վրայ խօսելով կ'ըսէ թէ գործաւորները պէտք չունին կրակ տալու

գործարանաց, որոնք օր մը իրենց պիտի ըլլան: — Իտալիոյ մէջ՝ Պուսգոյ Արսիցիոյ ըսուած տեղը աղջկանց դպրոցը կը փլէ և աւերակին տակը մահ կը գտնեն վեց աղջկունք և կը վիրաւորուին քսան աղջկունք:

19. — Գաղղիացի նաւերը Պիլպաոյի գէպէն ետե կը պատրաստուին Գաւլիսդներուն դէմ զէնք վերցունելու: — Յանկարծակի կը մեռնի Պրունզուիքի գուքսն Կարոլոս: — Գաւլիսդներն 2,400 հոգի հրամանատարութեամբ Տոն Ալփոնսոսի կը կոտորեն երեք սպանիացի գունդ ընդ մէջ Ֆիկուերասի և Պերկայի:

20. — Պարցելլոնայի հաղորդակցութիւնն Սպանիոյ միւս կողմանցն հետ բոլորովին կարուած է երկաթուղեաց ընդհատութեանը պատճառաւ: — Ընդ մէջ Վերկադոյի և Ռիոլայի, մերձ 'ի Պոլոնեա, երկաթուղւոյն վրայ երկու դէմ ընդդէմ կառաշարք իրարու կը զարնուին, 1 հոգի կը մեռնի ու 13 հոգի կը վիրաւորուին: — Կարթագինէի դէմ պատերազմն սկսաւ: — Գաւլիսդները կը մանեն Էսգէլլա քաղաքը:

21. — Անգղիոյ պանդան իջուց զեղջուլմն 3 առ 0/0: — Զիգակոյի մօտ երկաթուղւոյն վրայ երկու կառաշարք իրարու զարնուեր են, և 11 հոգի մեռեր ու 35 հոգի վիրաւորուեր են: — Նաբոլէոն իշխանը նախագահ կ'ընտրուի Գորսիգայի ընդհանուր ժողովոյն: — Սպանիոյ Գորգէսներուն կ'առաջարկուի օրինաց ծրագիր մը, 'ի կախ թողլու անձնական ազատութիւնները: — Ի դերեւ ելաւ սպանութեան փորձն ընդդէմ Տոն Ալփոնսոսի, և դաւաճանն հրացանով սպաննուեցաւ:

22. — Բողենի կղերանոցը փակուեցաւ հրամանաւ կրօնից Պաշտօնէին: — Պրէկուա զօրապետն 12,000 սպանիացի զօրք կը մանէ 'ի Պիլպաոյ: — Լիծարրակա գործարաններ կը կանգնէ 'ի Բլազէնցիա, որոնք օրն 200 հրացան պիտի տան: — Գաղղիա հաւանութիւն տուաւ Պեռնայի միջազգային թղթատարութեան ժողովոյն: — Իտալիոյ թագաւորն հրաւերք կ'ընդունի Գերմանիոյ կայսրէն Պեռլին գալու, երբ որոշէ երթալ Վեննայի համաշխարհական արուեստահանդէսը տեսնելու:

23. — Պէլժորի երկաթուղւոյն վրայ սարսափելի կերպով մէկմէկու կը զարնուին երկու կառաշարք, մէկը վաճառուց միւսը ճանապարհորդաց: 20 հոգի կը մեռնին, և շատերը կը վիրաւորուին: — Պարցելլոնայի թնդանթածիգները կ'ապստամբին զօրանոցներուն մէջ. ընդհանուր հրամանատարը կարգի կը բերէ զանոնք ձիաւոր զօրաց օգնութեամբ: — Կարթագինէի քաղաքական ու զինուորական ապստամբները մէկմէկու կը զարնուին: Երկու կողմանէ ալ կը մեռնին ու կը վիրաւորուին: